CyanMagentaYellowBlack

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐ

24.11.2015. Սուրբ Ղունկիանոս քահանայի, Տարագրոս, Պրոբոս եւ Անդրոնիկոս վկաների, եւ Սուրբ Պողոս առաքյալի աշակերտ Ոնեսիմոսի հիշատակության օր

26.11.2015. Սուրբ Կղեմես Հայրապետի եւ Բագարատ Տոռոմենա եպիսկոպոսի հիշատակության օր

ՍՏԵՓԱՆԾՄԻՆԴԱ-ԼԱՐՍ

ՁՄԵՌԱՅԻՆ ԱՆՎԱԴՈՂԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ Է

Վրաստանի ավտովարորդներին խոհուրդ է տրվում տեղադրել ձմեռային անվադողեր եւ ունենալ հակասահանքի շղթաներ բարձրալեռ երկրամասերում երթեւեկելու համար: Մասնավորապես, Գուդաուրի-Քոբի ավտոմայրուղու Մցխեթա-Ստեփանծմինդա-Լարս ճանապարհահատվածում ձնատեղումների պատճառով երթեւեկությունը սահմանափակ է: Տասնհինգ աստիճան սառնամանիքի պայմաններում թույլ է տրվում միայն հակասահանքի շղթաներով հագեցված մեքենաների երթեւեկությունը: Ինչպես տեղեկացրին տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարության ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտում, ձնատեղումների եւ մերկասառույցի պայմաններում անխափան երթեւեկության ապահովման համար, վարորդները պետք է խստորեն պահպանեն ներկայացված պահանջները՝ ավտոդողերի եւ հակասահանքի շղթաների հարցում, հակառակ դեպքում, պարեկային ոստիկանությանը վերապահվում է վտանգավոր ճանապարհահատվածներով չապահովագրված մեքենաների երթեւեկությունը արգելելու իրավունք:

Վրաստանի ՆԳ նախարարության արտակարգ իրավիճակների դեպարտամենտից ստացված տեղեկատվության համաձայն, Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը փակ է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար:

ՖՈՐՈՒՄ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՍՏՈՒԳԱՏԵՍ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Նոյեմբերի 19-26-ը Մինսկում մեկնարկեց ԱՊՀ-ի, Բալթյան երկրների եւ Վրաստանի երիտասարդական թատերական երկրորդ ֆորումը: Այն կշարունակվի մինչեւ նոյեմբերի 26-ը:

Ինչպես տեղեկացրեց թատերական ստուգատեսի նախաձեռնողը, Թատերական միությունների միջազգային համադաշնության նախագահ Վալերի Շադրինը, առաջին անգամ այդ ֆորումն անցկացվել է 2012 թվականին, Քիշնեւում: Նրա խոսքով, դա միայն թատրոնի երիտասարդ գործիչների լավագույն աշխատանքների ստուգատես չէ: «Դա տարածք է դերասանների, ռեժիսորների, սցենարիստների, դրամատուրգների, քննադատների համար, հարթակ՝ կարծիքների փոխանակման, ստեղծագործական նոր նախագծերի ստեղծման համար»,- ասաց նա:

Ֆորումի ութ օրվա ընթացքում Մինսկում կներկայացվի 14 բեմադրություն, որոնք ստեղծվել են 13 երկրների՝ Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Ղազախստանի, Լատվիայի, Լիտվայի, Մոլդովիայի, Ռուսաստանի, Տաջիկստանի, Ուկրաինայի, Ուզբեկստանի, Էստոնիայի թատրոնի երիտասարդ վարպետների կողմից: Մրցույթին մասնակցում է միայն 13 ներկայացում, որ ընտրվել են փորձագետների խորհրդի կողմից:

ՍՊՈՐՏ

ՄԵՐ ՍԱՄԲԻՍՏՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒՄ՝ 2 ՈՍԿԻ՛

Մարոկկոյի Կասաբլանկա քաղաքում եզրագիծը հատեց սամբոյի աշխարհի առաջնությունը: Վրաստանի թիմը, ընդհանուր առմամբ, իր ակտիվում գրանցեց տարբեր արժողության 9 մեդալ (2 ոսկի, 3 արծաթ եւ 4 բրոնզ): Դրանցից ութը վրաց ըմբշամարտիկները նվաճեցին անհատական մրցումներում, ընդ որում՝ 3-ը կին, իսկ մեկը՝ թիմայինում: Մասնավորապես, 60 կգ քաշային կարգում Շորենա Շոթաձեն արժանացավ բրոնզե մեդալի, իսկ 68 կգ քաշային կարգում Նինո Օբելաշվիլին եւ 80 կգ քաշային կարգում Ելենե Քեբալաձեն՝ արծաթե մեդալների: 57 եւ 100 կգ քաշային կարգերում աշխարհի չեմպիոններ դարձան Վախթանգ Չիդրաշվիլին եւ Դավիթ Լորաշվիլին: 68, 74 եւ 100+ քաշային կարգերում բրոնզե մեդալների արժանացան Լեւան Նախուցրիշվիլին, Բեսարիոն Բերուլավան եւ Բեքա Բերձենիշվիլին: Թիմային մրցաշարի եզրափակիչ փուլում, վրաց ըմբիշները, զիջելով Ռուսաստանի թիմին, նվաճեցին արծաթե մեդալ:

Հայաստանի թիմը մրցաշարից վերադարձավ երկու մեդալով: 52 կգ քաշայինում Տիգրան Կիրակոսյանն արժանացավ արծաթե մեդալի, իսկ 57 կգ քաշային կարգում բրոնզե մեդալ նվաճեց Էռնեստ Հայրապետյանը:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՊԱԱՏԱ ԲՈՒՐՃՈՒԼԱՁԵՆ ԳԱԼԻՍ Է ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխարհահռչակ վրաց երգիչ Պաատա Բուրճուլաձեն հիմնել է հասարակական-քաղաքական «Վրաստանի զարգացման հիմնադրամ» կազմակերպությունը:

Դեռեւս ընթացիկ տարվա հուլիսին Բուրճուլաձեն հայտարարեց, թե չի բացառում, որ զբաղվի քաղաքականությամբ, միայն այն դեպքում, երբ զգա, որ երկրին անհրաժեշտ է՝ նշելով, որ նման որոշում կընդունի միայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքի օրհնությամբ:

Նշենք, որ Պաատա Բուրճուլաձեի հիմնած նոր կազմակերպությունը «Պաատա Բուրճուլաձե-Վրաստանի զարգացման հիմնադրամ» անվան տակ արդեն գրանցվել է հանրային ռեեստրի ազգային գործակալության կողմից: Նորաստեղծ կազմակերպությունում երգիչն զբաղեցնում է դիտորդական խորհրդի ղեկավարի պաշտոնը, իսկ գործադիր տնօրենը՝ միջազգային հարցերով, Վրաստանի նախագահի խորհրդական Վանո Մաճավարիանին է:

ՆՈՐ ԳԻՐՔ

«ԿՈՒՅՐԵՐԸ ԳՆՈՒՄ ԵՆ ՖՈՒՏԲՈԼ»-Ի ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի հանդիսասրահում կայացավ բանաստեղծ, լրագրող, գրող, հասարակական գործիչ, 69-ամյա Բեսարիոն Սոլողաշվիլու «Կույրերը գնում են ֆուտբոլ» ռուսերեն թարգմանված գրքի շնորհանդեսը: Գիրքը թարգմանել է վիրահայ գրողների «Վերնատուն» միության անդամ, երաժիշտ Արտեմ Գրիգորենցը:

«Կույրերը գնում են ֆուտբոլ» պատմության առանցքում մարդ-բնություն ներդաշնակ հարաբերության կարեւորումն է: Գիրքը գրված է ինքնակենսագրական մոտիվներով, սակայն սոսկ ինքնակենսագրություն չէ: Վիպակի միջոցով Բ.Սոլողաշվիլին վերստեղծում է իր ժամանակի, իր Թբիլիսի քաղաքի, մարդկանց տպավորիչ պատկերներ: Նրա ստեղծագործությունն իր մեջ արտացոլում է երկու կույր հերոսների պատմության ճակատագրական էջերը, ովքեր, անցնելով դիմակայության ողբերգական վայրիվերումներով, ուզում են սուզվել կյանքի հորձանոտում, հայտնվել քաղաքային կյանքի տարբեր ասպարեզներում, մեծ դժվարությամբ ձեռք բերելով տոմսեր՝ ցանկանում են մասնակցել ֆուտբոլի չեմպիոնատի փառատոնին...

Շնորհանդեսին իրենց տպավորություններով կիսվեցին ռեժիսոր Թենգիզ Մալանիան, երգիչ Վախթանգ Արոշիձեն, պրոֆեսոր Զեմալ Սոլողաշվիլին, լսողական եւ տեսողական հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպության ղեկավար Խվիչա Գունիան, գրադարանավար Գիորգի Ապրիդոնիձեն, արվեստագետներ Թեմուր Շվանգիրաձեն եւ Ռոման Սոլողաշվիլին, «Վերնատուն» միության անդամ, վրացագիր Գարրի Ղալամքարովը եւ այլոք:

Ներկաներն իրենց խոսքում կարեւորեցին նաեւ թարգմանչի կատարած աշխատանքը՝ արժեւորելով թարգմանական գրականության դերն ու նշանակությունը հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում:

ՄՈՆԻԿԱ ՔՈՒՐՔՉՅԱՆ

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 3.Սայաթ-Նովա, Աշոտ, Շահեն, Իգիթ: 7.Աֆրիկյան պետություն: 10.«Հիշում եմ դեմքը քո ծեր, ... իմ անուշ ու անգին»: 11.Ոչ հաճելի, զզվելի, նողկալի: 12.Սիցիլիայի քաղաքամայրը: 15.Հերոս «Քաղաքում» կինոսերիալում: 18.Երգչուհի Լեդի ...: 21.Երկնային մարմին: 23.«Որսորդ ու շուն, ... թուլա, միսս են կրծում, ինձ հալածում» (Ա.Խնկոյան): 25.Կատարի ոստանը: 26.Մուրացանի հերոս ... Սեւադա: 27.Խոտակեր, մորթատու կենդանի, ուղտայծ: 28.Ե'վ արու արծիվ, ե'ւ Երեւանի քաղամաս: 29.Վիրահայոց ... առաջնորդ: 30.Խմորը ...ել: 31.Բյուզանդիայի կայսր: 33....ի հիմնադրամ: 34.Քաղաք Ռուսաստանի Դաշնությունում: 35.Առաջատար մսամթերքի ֆիրմա Հայաստանում «... սամարացի»: 36.«Աման, հողեմ գլուխը ...» («Թագավորն ու չարչին»): 39.Գթության ...: 41.Խելացի, կրթված: 43.Բնակավայրի տեսակ: 44.Թռչունների խումբ: 45.Առողջարանային քաղաք Հայաստանում: 48.Շեքսպիրի հերոս:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Վրացական հաց: 2.Թվեր եւ ...եր: 4.Ժայռի ամենաբարձր մասը, ուր բույն են դնում արծիվները: 5.Մուկ հերոս «Մկների ժողովում»: 6.Նոյի կինը: 8.Ներկայացման սցենարի հիմքը, գրական ստեղծագործության տեսակ: 9.Վրաց շախմատիստուհի ... Չիբուրդանիձե: 13.Դերասանուհի ... Ասրյան: 14.Թբիլիսիում լույս ընծայված հանդես: 16.Քիմիական ...: 17.Մասնատեմ, մասնատես, ...: 18.Ուսման, կրթության արդյունքը: 19.Գալիլեո ...: 20.Խոզերի խումբը: 22.Մթերքի հավաքածու: 23.Նամուս, պատիվ (խսկց.): 24.Մի խումբ մարդիկ: 31.«Փոքրիկ ...ն»: 32.... Թաբուկաշվիլի: 37...., հավատ, սեր: 38.Ալկոհոլային խմիչք: 40.Ատաղձագործի գործիք: 41.Պ.Պռոշյանի ստեղծագործություններից: 42.Դոլարի մանրը: 46.Վրաց լուսանկարիչ ... Խերխեուլիձե: 47.Էշի եւ ձիու խառնուրդ կենդանի:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Համախոհ: 9.Ալվան: 10.Լանչ: 11.Լիբերեց: 13.Անտառ: 16.Կալ: 17.Ջիմ: 19.Անխոհ: 22.Ալինա: 24.Անգոլա: 25.Ինքը: 27.Անիսոն: 29.Բալաստ: 32.Ալաբամա: 33.Նաիրիտ: 35.Քարբ: 37.Գնու: 39.Դանթե: 40.Ռենո: 43.Կիմ: 44.Թամբ: 47.Սեչ: 49.Նաիրա: 50.Ողջի: 53.Խուրձ: 54.Ունք: 55.Ալչու: 57.Այլ: 58.Իտրիում:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Մաշիկ: 2.Ճառել: 3.Քոլեջ: 4.Քաչա: 5.Ավետ: 6.Ամառ: 8.Հացիկ: 12.Բալի: 14.Նենգ: 15.Ամոլ: 18.Վանո: 19.Անխաբ: 20.Խորամանկ: 21.Հաշտ: 23.Նիստրու: 26.Քնատ: 28.Նվագ: 29.Բախ: 30.Լաքա: 31.Սարթիփ: 34.Ինգմար: 36.Բեմ: 38.Անե: 41.Եսաուլ: 42.Ոչ-ոքի: 45.Անուշ: 46.Բիձա: 48.Աջար: 51.Իլի: 52.Հում: 56.Չու:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445